

Ֆիզիկական անձանց վարկավորման պայմաններ

7.8 Օվերդրաֆտ Master Card Platinum/VISA Platinum քարտատեսակներով

Նպատակ	Նպատակ	Վճարումների իրականացում, կանխիկացում		
Հաճախորդի անձնական տվյալներ	Հաճախորդի (համավարկառուի/երաշխավորի) տարիք	18-63 տարեկան, պայմանով, որ վարկային պայմանագրի ժամկետի ավարտին վարկառուի տարիքը չի գերազանցի 63 տարեկանը, գերազանցելու դեպքում վարկը տրամադրվում է համավարկառուի/երաշխավորի առկայությամբ, այս դեպքում որպես ընդունելի տարիք նույնպես ընդունվում է 18-63 տարեկանը, պայմանով, որ պայմանագրի ժամկետի ավարտին համավարկառուի/երաշխավորի տարիքը չի գերազանցի 63 տարեկանը:		
	Ռեզիդենտություն	ՀՀ քաղաքացիություն ունեցող և չունեցող ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք		
Վճարունակության գնահատում	Ընդհանուր անգրավ պարտավորությունների առավելագույն գումար (ներառյալ այլ բանկերում և վարկային կազմակերպություններում)	Փաստաթղթավորված եկամուտի 8-ապատիկը, ոչ ավելի, քան 10 մլն ՀՀ դրամ		
Վարկի պայմաններ	Արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
	Քարտի սպասարկման վճար	3,000 ՀՀ դրամ ամսական / 30,000 ՀՀ դրամ տարեկան		
	Քարտային փաթեթի սպասարկման վճար	2,000 ՀՀ դրամ ամսական / 20,000 ՀՀ դրամ տարեկան		
	Քարտի նվազագույն և առավելագույն վարկային սահմանաչափ	Չի սահմանվում		
	Վարկավորման սահմանաչափ	Առավելագույնը փաստաթղթավորված եկամտի 4-ապատիկ՝ այդ եկամուտը Ամերիաբանկի միջոցով նվազագույնը 3 ամիս ստանալու դեպքում, Առավելագույնը փաստաթղթավորված եկամուտի 3-ապատիկ, եթե վերոնշյալ պայմանը առկա չէ: Ամերիաբանկի միջոցով նվազագույնը 3 ամիս ստանալու պայմանը չի տարածվում Աշխատավարձային նախագծերի շրջանակներում տրամադրվող վարկերի վրա:		
	Քարտի վարկային սահմանաչափի ավելացում	5,000 ՀՀ դրամ		
	Ժամկետ (ամիս)	Անժամկետ		
Տոկոսադրույք	Տոկոսադրույք	23%	18%	18%
		Տվյալ տոկոսադրույքը տրամադրվում է առնվազն վարկի մարման համար պահանջվող գումարը Ամերիաբանկի միջոցով ստանալու կամ վերջինիս նվազագույնը 3 ամսվա հաշվետեր հաճախորդ հանդիսանալու, ինչպես նաև այլ բանկում/վարկային կազմակերպությունում առնվազն 3 ամիս պատշաճ սպասարկվող վարկային պարտավորության տեղափոխման դեպքում: Եթե նշված պայմանները առկա չեն, ապա տոկոսադրույքը սահմանվում է +0.5%:		
Օվերդրաֆտի մարման եղանակ	Պարտադիր վճարման ենթակա գումար	Ամսական պարբերականությամբ մարվում է քաղվածքում արտացոլված օգտագործված գումարի 3%-ը, սակայն ոչ պակաս, քան 5,000 ՀՀ դրամ, 10 ԱՄՆ դոլար, 10 Եվրո և մարման պահին կուտակված տոկոսագումարը:		
		Վարկային հայտը լրացնելիս պահանջվող փաստաթղթեր. • Վարկի հայտ-դիմում • Անձը հաստատող փաստաթղթեր (բնօրինակը) Նախնական հաստատումից հետո պահանջվող փաստաթղթեր. • Տեղեկանք աշխատավարձի վերաբերյալ և/կամ եկամուտը հավաստող այլ փաստաթղթեր • Այլ փաստաթղթեր՝ Բանկի մասնագետի պահանջով:		

Տույժեր և տուգանքներ	Վարկի վաղաժամկետ մարման տուգանք	Չի գանձվում
Տույժեր և տուգանքներ	Տույժեր և տուգանքներ ժամկետանց մայր գումարի և տոկոսի նկատմամբ	<p>Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակում է Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը:</p> <p>Տույժ՝ ժամկետանց Վարկի 0.15 %-ի չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար, իսկ 5 աշխատանքային օր ժամկետանց պարտավորության առկայության դեպքում՝ նաև տուգանք՝ ժամկետանց Վարկի 2.0 %-ի չափով:</p> <p>Տույժ՝ ժամկետանց տոկոսագումարի 0.3%-ի չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար, իսկ 5 աշխատանքային օր ժամկետանց պարտավորության առկայության դեպքում՝ նաև տուգանք՝ ժամկետանց տոկոսագումարի 5.0 %-ի չափով:</p>
Այլ պայմաններ	Ապահովություն	Որպես ապահովություն Բանկը կարող է պահանջել ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց երաշխավորություն